# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ««ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-217$^{2}$-28.03.2022-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| **№** | **Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը** | **Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը** | **Առաջարկություն (փոփոխություն, լրացում)** | **Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը** | **Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը** |
|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| 1. | ՀՀ կառավարություն | **«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «օրենքում լրացումներ կատարելու մասին»» բառերը եւ չակերտը հանել՝ հապատասխանեցնելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի անվանմանը: | Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| 2. | ՀՀ կառավարություն | **«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 30-ի ՀՕ-314-Ն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասից հանել «սահմանային անցման կետերում» բառերը:<br>Հարկ է նկատել, որ «Ավտոմոբիլային տրանսպորտի | Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 30-ի ՀՕ-314-Ն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից տրանսպորտային միջոցներում թվային տախոգրաֆի շահագործման պահանջների տեսչական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին, տրանսպորտային միջոցների կայանման համար նախատեսված հատուկ գրպանիկներում, սահմանային անցման կետերում եւ ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող կազմակերպություններում:»:<br>Առաջարկում ենք «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությունը վերանայել՝ հանել նաեւ կա՛մ «սահմանային» բառից առաջ դրված «,» կետադրական նշանը, կա՛մ «կետերում» բառից հետո նշված «եւ» շաղկապը: | | |